

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-324-Ն, «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-325-Ն, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-326-Ն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-327-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 30.10.2025թ.)

- Հարկային օրենսգրքում նախատեսվել են մի շարք փոփոխություններ: Հարկային հաշվարկների ներկայացման վերաբերյալ օրենսգրքի ընդհանուր կարգավորումներով նախատեսվում է, որ առանձին բաժիններով կարող են սահմանվել հաշվարկի և դրա կազմմանը վերաբերող առանձնահատկություններ:
- Գործող կարգավորումներով հարկային մարմինը կարող է նախալրացնել ֆիզիկական անձանց եկամտային հարկի տարեկան հայտարարագրերը, սակայն դրանք սահմանված կարգով ներկայացված համարվելու համար անհրաժեշտ է ֆիզիկական անձի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ վավերացում և ներկայացում:
- Փոփոխություններով նախատեսվում է հետևյալը.
- տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար այն նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա,
- նախալրացրած հայտարարագիրը ֆիզիկական անձանց հասանելի է դառնում յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը ներառյալ,

- ֆիզիկական անձինք կարող են այդ ժամանակահատվածում փոփոխել նախալրացրած հայտարարագիրը և սահմանված կարգով ներկայացնել,
- վերոնշյալ ժամանակահատվածում նախալրացրած հայտարարագիրը սահմանված կարգով չստորագրելու և չներկայացնելու դեպքում նախալրացրած հայտարարագիրը համարվում է օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված,
- նվաճ հայտարարագրերում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում հետագայում կարող են ներկայացվել ճշտված հայտարարագրեր,
- սոցիալական ծախսի փոխհատուցում կատարվում է այն դեպքում, երբ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող անձը սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված հայտարարագիրը:
- անցումային կարգավորումներով նախատեսվում է, որ 2024թ. համար հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ 2025թ. համար 2026 թվականի մարտի 2-ից: Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք հնարավորություն ունեն նախալրացրած հայտարարագիրը փոփոխել և սահմանված կարգով ներկայացնել 2024թ. համար՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1-ը ներառյալ, իսկ 2025թ. համար՝ մինչև 2026թ. նոյեմբերի 1-ը ներառյալ:
- Օրենսգրքում եկամտային հարկով հարկման առումով նվազեցվող եկամուտները հստակեցվել են որպես չհարկվող եկամուտներ:
- Հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները:

- Կառավարությանը իրավասություն է վերապահվել սահմանել հայտարարագրում հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների տեսակներ կամ շեմեր:
- «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով նախատեսվում է, որ.
 1. անձնավորված հաշվառման տեղեկատվական բազան եկամտային հարկի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց դեպքում ներառելու է նաև Կառավարության սահմանած հայտարարագրման համակարգի շրջանակներում անհրաժեշտ տվյալները,
 2. տեղեկատվական բազան ձևավորելու նպատակով լիազոր մարմինը տեղեկություններ է ստանալու նաև ֆինանսական կազմակերպություններից, ապահովագրական ընկերություններից և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայից,
 3. ՀՀ ֆինանսական կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կողմից տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմին տրամադրելու կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով:
- Հարկային օրենսգրքով եկամտային հարկի հաշվարկների ներկայացման և հարկի վճարման ժամկետները վերանայելով պայմանավորված համապատասխան փոփոխություններ են կատարվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում:
- ՎԻՎ օրենսգրքում ուժը կորցրած է ճանաչվում հայտարարագիրը չներկայացնելու համար սահմանված պատասխանատվությունը:

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-310-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 30.10.2025թ.) «Ռազմական ոստիկանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-311-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 30.10.2025թ.)

- Սահմանվում են քաղաքացիների կողմից վարժական հավաքներից խուսափելու դրսևորման ձևերը, հստակեցվում է կատարվող հանցավոր արարքի նկարագրությունը, խստացվում է մի շարք ոչ իրավաչափ հանգամանքների զուգորդմամբ վարժական հավաքներից խուսափելու համար պատասխանատվությունը, ինչպես նաև հստակեցվում է ռազմական ոստիկանության լիազորությունների շրջանակը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-312-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 02.11.2025թ.), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-313-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 02.11.2025թ.)

- Այսուհետ վարորդներին կարգելվի տրանսպորտային միջոցներում տեղադրել ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ կամ նվազարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչներ կամ բարձրախոսներ: Սույն նորմը խախտելը կառաջացնի տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր, ինչպես նաև ստանդարտներին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների, խլացուցիչների կամ նվազարկիչների լրացուցիչ ուժեղացուցիչների կամ բարձրախոսների բռնագրավում:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-314-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 02.11.2025թ.)

- Սահմանային վերահսկողության իրականացումն ապահովելու նպատակով նախատեսվում է ամրագրել ՍԷԿՏ համակարգի գործելու հանգամանքը, նախատեսել դրանում տեղեկություններ մուտքագրելու ընդհանուր պայմանները, հստակեցնել համակարգի վերաբերյալ ենթաօրենսդրական մակարդակում կարգավորման ենթակա հարցերի շրջանակն ու լիազորված մարմնի գործառույթները: Սահմանվում է ՍԷԿՏ համակարգում արտացոլվող տվյալների համախումբը:
- Նախատեսվում է նաև, որ պետական մարմինները կարող են ՍԷԿՏ համակարգին հասանելիություն ունենալ և համակարգում տվյալներ մուտքագրել օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և այդ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծավալով:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-328-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 01.11.2025թ.)

- Նախատեսվում է, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման և համապատասխան փորձագիտական եզրակացության տրամադրման ու տեխնիկական քննության իրականացման գործառույթները վերապահել միայն հավատարմագրված անձանց:

«ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-330-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., 31.10.2025թ.)

- ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև 2025թ. մարտի 31-ին ստորագրվել է 2023թ. ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր):
- Համաձայնագրով նախատեսվում է Վերականգնման վարկերի բանկից ստանալ մինչև 26.000.000 եվրո վարկ՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ IV» ծրագրի համար և մինչև 2.000.000 եվրո դրամաշնորհ՝ վերոնշյալ ծրագրի իրականացման և խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար:
- Բացի այդ՝ ԳԴՀ կառավարությունը ՀՀ կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուների հնարավորություն է ընձեռում ստանալ մինչև 40.000.000 եվրո արտոնյալ վարկ «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ V» ծրագրի համար, որը Վերականգնման վարկերի բանկի միջոցով հատկացվում է Զարգացման հանրային համագործակցության շրջանակում:
- Կառավարությունը Վերականգնման վարկերի բանկին ազատում է ուղղակի հարկերից, որոնք ՀՀ-ում ենթակա են վճարման՝ կապված «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ IV և փուլ V» ծրագրերի կամ դրանց շրջանակներում կնքվող վարկային պայմանագրերի կնքման հետ:

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմի վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին ՀՕ-331-Ն (ընդունված՝ 22.10.2025թ., ուժի մեջ՝ 31.10.2025թ.)

- Արձանագրության նպատակն է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում կատարել փոփոխություններ՝ ուղղված Եվրասիական տնտեսական միությունում հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցների կիրառման մեխանիզմների կատարելագործմանը, ինչպես նաև նվաճած միջոցների կիրառման վերաբերյալ որոշումների մեխանիզմի օպտիմալացմանը՝ ԵԱՏՄ արտադրողների վրա աճող և (կամ) անբարեխիղճ ներմուծման բացասական ազդեցությունը վերացնելու նպատակով:

«Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-315-Ն (ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)՝ որոշ բացառություններով)

- «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքը սահմանում է ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման վերաբերյալ կարգավորումները:
- Սահմանվում են Ոստիկանության ծառայողների էթիկայի հանձնաժողովի լիազորությունները, ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, կիրառվող կարգապահական տույժերը և այլն:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենք և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-285-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 20.10.2025թ.)

- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակն է կարգավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգում իրավական կազմակերպման և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերությունները և սահմանել այդ ոլորտում պետական քաղաքականության ձևավորման սկզբունքները: Օրենքը տարածվելու է ՀՀ-ում գործող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց կազմակերպա-իրավական ձևից:
- Օրենքով կարգավորվելու է նաև բարձրագույն կրթության դիպլոմի, բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման, բուհի նկատմամբ կիրառվող նախազգուշացման և բուհի լիցենզիայի գործողության դադարեցման, բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման, օտարերկրյա որակավորումների ճանաչման, բուհ ընդունելության հետ կապված հարցերը:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-329-Ն (ընդունված՝ 24.10.2025թ., ուժի մեջ՝ 08.11.2025թ.)

- Նախատեսվում է, որ հանրային հեռարձակողների նվազագույն թիվը սահմանվում է երկու, որով նախատեսվում է ապահովել բյուջետային միջոցների ավելի նպատակային օգտագործում, հանրային հեռարձակողների ֆինանսական կայունության ամրապնդում, և ընդհանուր առմամբ հանրային հեռարձակման համակարգի արդյունավետության բարձրացում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

«ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1393-Ն, ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 12.10.2025թ.)

- Գործող կարգավորումների համաձայն ոչ բոլոր համայնքներն են գնման մրցակցային ընթացակարգերը կազմակերպում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Մասնավորապես թվով 70 համայնքներից համակարգի միջոցով գնումներ կատարում են թվով 44-ը:
- Որոշմամբ առաջարկվում է ընդլայնել էլեկտրոնային գնումներ կատարող պատվիրատուների շրջանակը՝ դրանում ներառելով Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը և թվով 26 համայնքները, որոնց ցանկը ներկայացված է Կառավարության որոշմանը կից:

«ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1419-Ն, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 19.10.2025թ.)

- 2025 թվականի մարտի 5-ին ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-63-Ն օրենքը: Օրենքում լրացվել է հետևյալ դրույթը. «Տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը փակցվում են սպառողներին տեսանելի տեղում»:
- Օրենքում կատարված լրացումը կիրարկելու նպատակով տվյալ որոշման մեջ առաջարկվում է «Սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի և հումքի՝ հանրապետության տարածքով փոխադրման և իրացման» վկայականի տիպային ձևում կատարել փոփոխություն այն է՝ «տեղական արտադրության» բառերից հետո լրացնել «ներմուծված կենդանուց» բառը՝ համապատասխանեցնելով օրենքով սահմանված իրավակարգավորմանը:

«ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 905-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» (N 1428-Ն, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 10.10.2025թ.)

- ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի «2025 թվականի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու, ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը սահմանելու, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 905-Ն որոշմամբ նախատեսված է 365 տոննա սակագնային քվոտայի ծավալով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2002 90 110 0, 2002 90 190 0, 2002 90 310 0, 2002 90 390 0, 2002 90 910 0, 2002 90 990 0 ծածկագրերին դասվող լուլիկի մածուկի բաշխում: Որոշմամբ նախատեսվում է լուլիկի մածուկի սակագնային քվոտայով հատկացված 365 տոննա ծավալի համար ներմուծման լիցենզիայի գործողության ժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 16-ից մինչև ս.թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

«ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (N 1422-Լ, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 10.10.2025թ.)

- Որոշման ընդունումը պայմանավորված է գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմանները բարելավելու և տնտեսավարողների կողմից 2025 թվականի խաղողի մթերումներ իրականացնելու նպատակով վարկեր ներգրավելու համար անհրաժեշտ ապահովման միջոցների չբավարարող մասի համար բյուջետային երաշխիքներ տրամադրելու անհրաժեշտությամբ: Որոշմամբ առաջարկվում է Ծրագրում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություն, ըստ որոնց՝
 1. խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Կառավարության կողմից 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվում է մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2024 թվականին արտահանված արտադրանքի արժեքը,
 2. Ծրագրի շրջանակներում 2025 թվականին խաղողի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի համար պայմանագրերի կնքման մինչև սեպտեմբերի 1-ը ժամկետը երկարաձգել մինչև նոյեմբերի 1-ը:

«2025 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը հաստատելու մասին» (N 1426-L, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 11.10.2025թ.)

- Որոշմամբ սահմանվում է, որ՝
 1. բյուջետային երաշխիքները տրամադրվում են Ճրագրի շրջանակներում խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող վարկերի համար, իսկ տրամադրվող բյուջետային երաշխիքի գումարը չպետք է գերազանցի \$4-ի կողմից տրամադրվող վարկի գումարի 50%-ը, բայց ոչ ավելի, քան 2024 թվականին արտահանված արտադրանքի արժեքի չափը: Տրամադրվող բյուջետային երաշխիքի գումարի նվազագույն չափը կազմում է 100 մլն դրամ,
 2. բյուջետային երաշխիքները կարող են տրամադրվել առանց ապահովման լրացուցիչ միջոցների,
 3. շահառուի կողմից իրականացված վարկի հիմնական գումարի մարումներն առաջնային կարգով ուղղվում են բյուջետային երաշխիքներով ապահովված պարտավորությունների մարմանը,
 4. բյուջետային երաշխիքները տրամադրվում են առավելագույնը մինչև քսանյոթ ամիս մարման ժամկետով,
 5. յուրաքանչյուր շահառուին և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց 2022, 2023, 2024 թվականներին տրամադրված և 2025 թվականին տրամադրվող բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 5 մլրդ դրամը,
 6. բյուջետային երաշխիքների տրամադրման կարգով բյուջետային երաշխիքից կարող է օգտվել 2025 թվականին խաղողի գնումներ իրականացնող և 2024 թվականին արտահանումներ իրականացրած այն շահառուն, որն ունի դրական վարկային պատմություն և դիմումի ներկայացման նախորդող օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ,
 7. եթե տնտեսավարողը բյուջետային երաշխիքի գործողության ժամկետում ունեցել է երաշխիքով ապահովված պարտավորությունների մարման 90 օր և ավելի ժամկետանց պարտավորություններ, ապա բյուջետային երաշխիքի տրամադրման աջակցությունից չի կարող օգտվել 2 տարի:

«ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-L որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (N 1447-L, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 11.10.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է՝ ՀՀ-ում գործող գյուղատնտեսական կոոպերատիվների արդյունավետ գործունեությունը խթանելու անհրաժեշտությամբ: ՀՀ կառավարությունը փոփոխություններ է կատարել 2022 թվականի հունվարի 27-ի N105-L որոշման մեջ՝ ընդլայնելով գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության շրջանակը: Եթե նախկինում ծրագիրը վերաբերում էր միայն տոկոսադրույքի սուբսիդավորմանը, այժմ այն ներառում է նաև լիզինգի առարկայի արժեքի կանխավճարի մասնակի սուբսիդավորում՝ բացառապես գյուղատնտեսական կոոպերատիվների համար:
- Նոր կարգով պետությունը սուբսիդավորում է կանխավճարի 30 տոկոսը (մինչև 2.5 մլն դրամի չափով), ինչը կնպաստի կոոպերատիվների ֆինանսական բեռի նվազեցմանը տեխնիկայի ձեռքբերման ժամանակ: Սուբսիդիայի իրավունք ունեն միայն այն կոոպերատիվները, որոնք ունեն առնվազն մեկ տարվա գործունեություն, մաքուր վարկային պատմություն, հարկային պատասխանատվության բացակայություն և հաստատված գործարարական ծրագիր: Ծրագրով նախատեսված սուբսիդավորումը կիրականացվի մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը, իսկ ձեռք բերված տեխնիկան չի կարելի օտարել հաջորդող 5 տարվա ընթացքում:

«ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» (N 1468-Ն, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 18.10.2025թ.)

- Առաջարկվում է համապարփակ կարգավորել անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ Տեսչական մարմնի գործունեության հետ կապված հարաբերությունները՝ ստեղծելով տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ:
- Մասնավորապես՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը ներգրավվել է ֆունկցիոնալության գնահատումն իրականացնող «e-disability» էլեկտրոնային համակարգին հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկում: Վերոնշյալ տեսչական մարմին տրվել է նաև միջնորդագիր ներկայացնել անձի ֆունկցիոնալության վերագնահատման վերաբերյալ:

«ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի N 92-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 1478-Ն, ընդունված՝ 23.10.2025թ., ուժի մեջ՝ 24.10.2025թ.)

- Որոշմամբ նախատեսվող փոփոխությունները ուղղված են՝
 1. ֆիլմերի վարձության վկայականների տրամադրման, դասակարգման և տարիքային սահմանափակումների սահմանման գործընթացի կատարելագործմանը և հստակեցմանը,
 2. ֆիլմերի առաջին ցուցադրության ընթացքում ավելի արդյունավետ վերահսկողության իրականացմանը՝ ապահովելով սահմանված դասակարգման ճշգրտությունը,
 3. հայտադիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի և ներկայացման կարգի հստակեցմանը՝ նպաստելով վարչական գործընթացների ամբողջականությանն ու թափանցիկությանը:
- Առաջարկվող կարգավորումները սահմանում են օտարերկրյա ֆիլմերին վարձության վկայական տրամադրելու հատուկ մեխանիզմ, որը մի կողմից պաշտպանում է հեղինակային և կոմերցիոն իրավունքները, իսկ մյուս կողմից՝ ապահովում է պետության վերահսկող և կարգավորող գործառնությունների արդյունավետ իրականացումը:

«ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1528-Ն, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 01.11.2025թ.)

- Կառավարության որոշմամբ փոփոխվում է 2020թ. ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված՝ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգաթերթերը, քանի որ 2025թ. ընդունվել են նոր նորմատիվ և ենթաօրենսդրական ակտեր (դեղերի և բժշկական արտադրատեսակների գովազդի կարգ, տուբերկուլոզի կանխարգելման նորմատիվ), որոնցով սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և բժշկական օգնության և սպասարկման ոլորտներում սահմանվել են նոր պահանջներ:
- Որոշման նպատակն է՝
 1. նոր նորմատիվ պահանջները ներառել ստուգաթերթերի ձևաթղթերում,
 2. ստուգումները դարձնել ավելի նպատակային ու արդյունավետ,
 3. ապահովել այդ ոլորտներում սահմանված կանոնների պատշաճ վերահսկողությունը:

«ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 971-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N 1488-Լ, ընդունված՝ 23.10.2025թ., ուժի մեջ՝ 24.10.2025թ.)

- Շշարժված կոնյակի արտահանման կրճատումը լրացնելու նպատակով առաջարկվում է 2025թ. ապրիլի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 1-ը պետական աջակցություն տրամադրել կոնյակի սպիրտ արտահանողներին: Աջակցությունը կտրամադրվի այն տնտեսավարողներին, որոնք արտահանում են ԱՏԳ ԱԱ 220820890 ծածկագրով դասվող կոնյակի և բրենդիի սպիրտ՝ վճարելով օրենքով նախատեսված լրացուցիչ 100 դրամ պետական տուրքը: Աջակցությունը չի տարածվի ներքին շուկայի վաճառքների վրա և այն տնտեսավարողների վրա, որոնք 2024-2025թթ. չեն իրականացրել խաղողի մթերումներ:
- Աջակցության առավելագույն չափը չի կարող գերազանցել մթերված խաղողին համարժեք կոնյակի սպիրտի (100% սպիրտի հաշվարկով) և 100 դրամի արտադրյալի չափը՝ 11 կգ խաղողը 1 լիտր սպիրտ հաշվարկով:
- Եթե արտահանվում է այլ սուբյեկտից գնված սպիրտ, ապա աջակցությունը կտրվի միայն այն դեպքում, երբ ներկայացվում է վաճառողի կողմից տրված N6 ձևի տեղեկությունը՝ մթերումների իրականացումը հաստատելու համար:

«ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի N 922-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (N 1530-Ն, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 01.11.2025թ.)

- Որոշմամբ առաջարկվում է պարզեցնել հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) տրամադրման ընթացակարգը այն ֆիզիկական անձանց համար, որոնք անհատ ձեռնարկատեր չեն: Այժմ ֆիզիկական անձինք հարկային մարմնում հաշվառվելու համար պետք է իրենց էլեկտրոնային անձնական գրասենյակից ներկայացնեն հատուկ դիմում, որից հետո հարկային համակարգը 1 աշխատանքային օրվա ընթացքում նրանց տրամադրում է ՀՎՀՀ:
- Որոշմամբ նախատեսվում է, որ եթե ֆիզիկական անձը էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգում նույնականացման ընթացքում տալիս է համապատասխան համաձայնություն, ապա հարկային մարմնի տեղեկատվական համակարգը նրան ՀՎՀՀ կտրամադրի ինքնաշխատ կերպով՝ առանց լրացուցիչ դիմումի: Բացի այդ, նախատեսվում է, որ եկամտային հարկի տարեկան հայտարարագիր ներկայացնելու նպատակով հարկային մարմինը նույնպես կկարողանա ինքնաշխատ եղանակով ՀՎՀՀ տրամադրել տվյալ անձին: Կարգավորումը միտված է նվազեցնել վարչարարությունը և ապահովել ֆիզիկական անձանց արագ ու ավտոմատ հաշվառում:

«ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1516-Ն, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 31.12.2025թ.)

- ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված մշակութային արժեքների կամ խոշոր չափերով ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների մաքսանենգության՝ ԵՏՄ մաքսային սահմանով կամ ՀՀ պետական սահմանով այդ արժեքը կամ ապրանքն ապօրինի տեղափոխելու համար, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունը սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնը, այդ թվում՝ արգելք կամ սահմանափակում խախտելու կամ մաքսային կամ այլ փաստաթուղթը խաբեությամբ օգտագործելու միջոցով:
- Ցանկը սահմանված է Կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների և մշակութային արժեքների ցանկը հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշմամբ, որը հղում է կատարում ԵՏՀ խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման մեջ ընդգրկված ԱՏԳ ԱԱ 2530 90 000 1, 2616, 7101-7104, 7106-7112, 9602 00 000 1 ծածկագրերին դասվող ապրանքատեսակներին: Այն ճանաչվել է ուժը կորցրած և 01.01.2022 թ.-ից գործում է ԵՏՀ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշումը: Այս հակասությունը վերացնելու նպատակով որոշման մեջ հստակեցվում է, որ ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների և մշակութային արժեքների շարքին է դասվում ԵՏՀ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ ընդգրկված՝ ԱՏԳ ԱԱ 2530 90 000 1, 2616, 7101-7104, 7106-7112, 9602 00 000 1 ծածկագրերին դասվող ապրանքատեսակները:

«ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 113-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1523-Ն, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 31.10.2025թ.)

- Կարգավորվել են անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատությունների՝ մինչև ՀՀ-ում իրավաբանական անձանց գրանցման պահն ընկած ժամանակահատվածում ներառված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկի կամ հարկման բազայի նվազեցման կարգի, չափերի և ժամանակահատվածի հետ կապված հարաբերությունները:

- Կառավարության որոշմամբ սահմանված էր, որ հարկային արտոնություններից օգտվելու համար մշտական հաստատությունը մինչև 2024թ. հունիսի 30-ը արտոնությունից օգտվելու յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար թղթային եղանակով դիմում է ներկայացնում հարկային մարմին:
- Մշտական հաստատությունները որոշմամբ սահմանված արտոնություններից օգտվելու դիմումներ ներկայացնելու համար ունեցել են ընդամենը 6 ամիս ժամանակ, և նշյալ ժամանակահատվածը բավարար չի եղել որոշմամբ սահմանված արտոնություններից օգտվելու դիմումները ներկայացնելու համար:
- Արդյունքում, ՀՀ-ում հաշվառված որոշ մշտական հաստատությունների մոտ առաջացել են լրացուցիչ հարկային պարտավորություններ: Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հետաձգվում է հարկային արտոնությունների համար հարկային մարմին դիմումներ ներկայացնելու ժամկետը՝ նպատակ ունենալով բարելավել ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատությունների հարկային միջավայրը:

«Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» (N 1518-Ն, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 02.02.2026թ.)

- Նախատեսվում է 2026թ. փետրվարի 2-ից մինչև 2026թ. օգոստոսի 2-ը ժամանակավորապես արգելել ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխումն ու երրորդ երկրներ արտահանումը՝
 1. սև մետաղների որոշ տեսակների, խողովակների, մետաղակոնստրուկցիաների (ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303-7308, ներառյալ որոշ օգտագործված տարրեր),
 2. գունավոր մետաղների թափոնների և ջարդոնի (պղինձ, ալյումին, նիկել, կապար և այլն) լայն ցանկի,
 3. ինչպես նաև որոշ օգտագործված կամ սպառված մեքենաների, էլեկտրական սարքավորումների և դրանց մասերի վրա (ԱՏԳ ԱԱ 8415-8549 խմբեր):
- Արգելքը չի տարածվում, եթե՝
 1. ապրանքները կանոնակարգված մաքսային ընթացակարգերով ժամանակավոր են ներմուծվել կամ արտահանվել ու վերադարձվում են,
 2. թույլատրելի անձնական օգտագործման մասշտաբով ֆիզիկական անձանց կողմից է արտահանումը,
 3. ապրանքը քաղաքացիական ավիացիայի կամ երկաթուղային տրանսպորտի շահագործման համար է կամ ՀՀ-ում է արտադրված և սահմանված բացառությունների ցանկում է:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածքներ» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխություն» նամակ-համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» (N 1389-Ա, ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 03.10.2025թ.)

- ՀՀ կառավարության և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) միջև նախատեսվում է «Ջրային հատվածի համայնքային ենթակառուցվածքներ» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխություն» նամակ-համաձայնագրի ստորագրումը՝ Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների ֆինանսավորման համար վարկային միջոցների վերջնական հասանելիության, Ծրագրի իրականացման և դրան առնչվող հաշվետվության ներկայացման վերջնաժամկետները երկարաձգելու նպատակով:
- Վերոնշյալ պայմանագրերով իրականացվող շինարարական աշխատանքների և մատուցվող վերահսկողության խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորման, ինչպես նաև առաջիկայում կնքվելիք շինարարական պայմանագրերով նախատեսվող վճարումների կատարման, հետևաբար՝ ԵՆԲ վարկային միջոցների մասհանումների շուտափույթ իրականացման համար անհրաժեշտ և նպատակահարմար է առաջարկվող փոփոխության նամակ-համաձայնագրի ստորագրումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1502-Ա, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 31.10.2025թ.)

- Նախատեսվող փոփոխություններն են.
 1. սահմանվելու է «խորհրդատվական կենտրոն» հասկացությունը, որը սահմանում է խորհրդատվական կենտրոնի գործառույթները,
 2. միաժամանակ խորհրդատվական կենտրոնին կվերապահվեն այն լիազորությունները, որոնք մինչ այդ պատկանում էին սպասարկման գրասենյակին, օրինակ՝ պետական գրանցման վարույթ հարուցելու լիազորությունը,
 3. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ որոշ փաստաթղթեր այլևս կտրամադրվեն Կառավարության կողմից:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև հայտագրերի փոխանակման ձևով կնքվող «Տեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» (N 1396-Ա, ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 03.10.2025թ.)

- Հայաստանը շահագրգռված է ընդլայնել և ամրապնդել Գերմանիայի հետ համագործակցությունը քաղաքական, առևտրատնտեսական, գիտակրթական, մշակութային և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով:
- Համաձայնագրով նախատեսվում է հետևյալ օժանդակությունը.
 1. Մասնավոր տնտեսության զարգացում և նախնական և միջին մասնագիտական կրթություն Հայաստանում՝ մինչև 6,100,000 եվրո,
 2. Կենսակայուն էներգետիկա հանուն ՀՀ համայնքների կլիմայադիմացկուն զարգացման՝ մինչև 6,100,000 եվրո,
 3. Հայաստանի համայնքների ինտեգրված զարգացում՝ մինչև 3,100,000 եվրո,
 4. Ուսումնասիրությունների և մասնագետների հայաստանյան ֆոնդեր՝ մինչև 300,000 եվրո:
- ԳԴՀ կառավարությունը վերոնշյալ 4 ծրագրերի իրականացման համար տրամադրում է անձնակազմային և ոչ դրամական ծառայություններ, անհրաժեշտության դեպքում նաև ֆինանսական գումարներ՝ 15,600,000 եվրո ընդհանուր արժեքով: Նշված ծրագրերի կատարումը ԳԴՀ կառավարությունը հանձնարարում է Գերմանական Միջազգային համագործակցության ընկերությանը (ԳՄՀՀ/GIZ):
- ՀՀ կառավարությունը կատարող կազմակերպություններին ազատում է բոլոր տեսակի ուղղակի հարկերից, որոնք ՀՀ-ում ծագում են վերոնշյալ 4 ծրագրերի կամ Համաձայնագրի 3-րդ կետում նշված կատարողական պայմանագրերի, անհրաժեշտության դեպքում նաև ֆինանսական պայմանագրերի կնքման և կատարման համատեքստում:

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման և շրջանառության անդրսահմանային թույլտվության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծի մասին» (N 1401-Ա, ընդունված՝ 02.10.2025թ., ուժի մեջ՝ 03.10.2025թ.)

- «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում կազմակերպված սակարկություններում արժեթղթերի տեղաբաշխման և շրջանառության անդրսահմանային թույլտվության մասին» համաձայնագիրը մշակվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսական դեպարտամենտի և անդամ պետությունների արժեթղթերի շուկաների կարգավորողների կողմից, որպես «Բրոքեր-դիլեր» պիլոտային նախագծի («ԵԱՏՄ մեկ անդամ պետության բրոքերների և դիլերների՝ այլ անդամ պետությունների բորսաներ մուտքի մասին» համաձայնագիր) շարունակություն:
- Համաձայնագրի նպատակն է ապահովել ԵԱՏՄ անդամ պետություններում ցուցակված արժեթղթերի տեղաբաշխումը և շրջանառությունը ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում, ինչի արդյունքում թողարկողների համար ներդրումային միջոցների ներգրավման նոր հնարավորություններ են ստեղծվում:
- Համաձայնագրով սահմանված հիմնական սկզբունքներն են արժեթղթերի ոչ խտրական «մուտք»-ը ԵԱՏՄ ընդհանուր բորսայական տարածք և արժեթղթերի շրջանառության, ինչպես նաև առաջնային տեղաբաշխման հնարավորությունը:
- Համաձայնագրով սահմանված սահմանափակումներն են՝ «մուտքի» հնարավորությունը միայն բաժնետոմսերի և պարտատոմսերի համար և «մուտքի» հնարավորությունը միայն բորսաների հիմնական (առաջատար) հարթակներում ցուցակված արժեթղթերի համար:
- Համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա ՀՀ ռեզիդենտ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց (բրոքերներին և դիլերներին) ձեռք բերել ԵԱՏՄ անդամ պետությունների բորսաներում ցուցակված և շրջանառվող «բարձր որակի» արժեթղթեր՝ առանց լրացուցիչ ծախսեր կատարելու:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1427-Ա, ընդունված՝ 09.10.2025թ., ուժի մեջ՝ 10.10.2025թ.)

- Առաջարկվում է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված իրավախախտումների գործերով վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ դրույթով նախատեսված առանձնահատկությունները կիրառելի դարձնել նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառված տրանսպորտային միջոցներով «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից կատարված և օրենքով քննության ենթակա գործերով կայացված վարչական ակտերին:
- Նախատեսվում է լրացումներ կատարել օրենքի՝ ՀՀ-ում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված իրավախախտումների գործերով վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ հոդվածում, մասնավորապես՝
 1. Սույն հոդվածի սուբյեկտ կհանդիսանան նաև ՀՀ-ում հաշվառված, սակայն «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող (օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք) և ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող անձինք,
 2. Կավելացվի դրույթ, ըստ որի՝ օտարերկրացի համարվող և ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից կատարված իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում է օտարերկրացի համարվող անձը, եթե ապացուցվում է, որ ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցներով արձանագրված իրավախախտումը կատարվել է օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող և ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից:

««ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1452-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ ապօրինի հարստանալու հանցակազմի սուբյեկտի և ՀՀ օրենսդրությամբ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը կամ հայտարարագիրը չներկայացնելու մասին հոդվածներով նախատեսված արարքի սուբյեկտների շրջանակը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տալով լիազորություն սահմանելու այն իրավիճակները, երբ անձը կարող է վերոնշյալ հանցակազմերով ենթարկվել պատասխանատվության:

««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1451-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է ռեաբիլիտացիայի իրական հնարավորություն այն անձանց համար, ովքեր օրենքով չնախատեսված լինելով հանդերձ ներգրավվել են քրեական գործընթացների մեջ՝ քրեական պատասխանատվության համար նախատեսված տարիքային շեմին չհասնելու պայմաններում և նախատեսել խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր:

««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկության մասին» (N 1486-Լ, ընդունված՝ 23.10.2025թ., ուժի մեջ՝ 24.10.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է հունվարի 27-ը սահմանել ոչ աշխատանքային օր՝ որպես հիշատակի և խոնարհումի օր բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ժամանակ զոհվածների հիշատակին:

««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքերի նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին» (N 1462-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ծանուցումները իրականացնել էլեկտրոնային եղանակով:
- Ֆիզիկական անձինք ծանուցումները կստանան իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստով: Եթե 3 օրվա ընթացքում էլ. փոստ մուտք գործելու հավաստում չկա, ծանուցումը կուղարկվի հիբրիդային փոստով (փոստային կապի ծառայության տեսակ, որի միջոցով փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկում է փոստային կազմակերպությանը, որն այն տպում և առաքում է թղթային տարբերակով), իսկ այն չստանալու դեպքում՝ կիրականացվի հրապարակային ծանուցում, իսկ եթե անձը տվել է միայն էլեկտրոնային փոստով ծանուցումներ ստանալու գրավոր կամ էլեկտրոնային համաձայնություն, նա համարվում է պատշաճ ծանուցված տեղադրման օրվանից հետո 3-րդ օրը՝ անկախ համակարգ մուտք գործելուց:
- Իրավաբանական անձանց և ԱԶ-ների դեպքում ծանուցումները կտեղադրվեն հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում, և ծանուցումը համարվում է պատշաճ կատարված, տեղադրվելու օրվան հաջորդող 3-րդ օրը: Եթե 3 օր անց համակարգ մուտք գործելու հավաստում չկա, ծանուցումն իրականացվում է հրապարակային ձևով, և իրավաբանական անձը կամ ԱԶ-ն համարվում է պատշաճ ծանուցված հրապարակման 5-րդ օրը: Հնարավորություն է տրվում իրականացնելու ծանուցում էլեկտրոնային եղանակով այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին, եթե վերջիններս միացած են «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով սահմանված տվյալների փոխանակման շերտին:
- Օրենքի փոփոխության նպատակն է ապահովել արդյունավետ, արագ և թափանցիկ ծանուցման գործընթաց՝ նվազեցնելով թղթային հաղորդակցությունը և պետական մարմինների վարչարարական ծախսերը:

«ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1456-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպման կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական տրանսպորտային միջոց ներմուծման և ազատ շրջանառության նպատակով բացթողման կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծման կամ ՀՀ տարածքում օտարման համար ավելացված արժեքի հարկի արտոնությունը երկարաձգել մեկ տարով՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1500-Ա, ընդունված՝ 30.10.2025թ., ուժի մեջ՝ 31.10.2025թ.)

- Առաջարկվում է սահմանել, որ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողների կողմից որպես արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները համարվեն եկամուտ այն հարկային տարում, երբ համապատասխան ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ դրանց համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:
- Նաև, վերոնշյալ կանոնից սահմանվում է բացառություն՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացվող վարկերի (լիզինգի) և դրանց տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները չեն համարվի եկամուտ, իսկ վերջիններիս նկատմամբ հաշվարկված տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները չեն համարվի ծախս:
- Առաջարկվող դրույթների կիրառությունը նախատեսվում է տարածել 2024թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա՝ հաշվի առնելով, որ նշված խնդիրը ակտուալ է դարձել 2024 թվականից սկսած՝ պետական ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցման մասով:

«ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1454-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- Առաջարկվող լրացումներով կարգավորվում է նախկինում պետական սեփականություն հանդիսացող և համապատասխան համայնքներին Կառավարության որոշումներով փոխանցված, փոխանցման պահին Կառավարության վերոնշյալ որոշումներով չմասնավորեցվող դասված, սակայն դրանից հետո համայնքների գլխավոր հատակագծերում կամ հողամասերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, ինչպես նաև դրանցում իրականացված կամ իրականացվող փոփոխություններում նշված հողամասերի մասով նման սահմանափակում չնախատեսող հողամասերի հետագա տնօրինումը՝ առանց նշված որոշումներում փոփոխություն կատարելու համայնքի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ հողամասը Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում այլևս ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:
- Միաժամանակ, անցումային դրույթներով նախատեսվում է օրենքի գործողությունը տարածել նաև դեռևս չօտարված այն հողամասերի նկատմամբ, որոնց նպատակային կամ գործառնական նշանակությունը (հողատեսքը) քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով փոփոխվել է մինչև ներկայացվող օրինագծի ուժի մեջ մտնելը:

««Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1457-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- նախագծով նախատեսվում է օրենքում կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում: Մասնավորապես.
 1. սահմանվում են նոր հասկացություններ, ինչպիսիք են՝ ծառայություններ մատուցող, ռեցիպիենտ երկիր հասկացությունները, որոնք անհրաժեշտ են նոր լրացվող դրույթներում իրավական հստակություն ապահովելու նպատակով,
 2. նախատեսվում է գնահատման գործունեության իրականացում նաև ծառայություններ մատուցողների միջոցով, ինչը կնպաստի շուկայի մասնագիտական ներուժի և մատուցվող ծառայությունների բազմազանության ընդլայնմանը,
 3. սահմանվում են իրավունքեր, պարտականություններ և սահմանափակումներ ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության որակավորված գնահատողների և գնահատման կազմակերպությունների համար՝ ապահովելով իրավահարաբերությունների հավասարակշռված և կարգավորված բնույթ,
 4. կատարվում են փոփոխություններ հաշվառման ծրագրի կիրառման կարգում, մասնավորապես նախատեսվում է, որ Կադաստրի կոմիտեն մուտքանուն և գաղտնաբառ է տրամադրում ոչ միայն գնահատողներին, այլև գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության ղեկավարին, ծառայություններ մատուցողներին, գնահատման կազմակերպությունների ղեկավարներին,
 5. սահմանվում են նոր իրավասություններ Կադաստրի կոմիտեի համար՝ որպես գնահատման գործունեության ոլորտը կարգավորող, վերահսկող և որակավորում իրականացնող լիազոր մարմնի: Մասնավորապես, հստակեցվում են Կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում:
- նախագծով սահմանվում է նաև, որ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում գույքի ծառայություններ մատուցողը չի կարող իրականացնել այն գնահատման ծառայությունները, որոնց պատվիրատուն հանդիսանում է պետությունը կամ համայնքը:

««Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքերի նախագծերին հավանություն տալու մասին» (N 1460-Ա, ընդունված՝ 16.10.2025թ., ուժի մեջ՝ 17.10.2025թ.)

- Սույն փոփոխություններով օտարերկրացիների կարգավիճակի հետ կապված տեղի են ունեցել մի շարք լրացումներ, մասնավորապես՝
 1. աշխատանքային գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ տալու վարույթների օրինակով թվայնացվելու են մյուս հիմքերով կացության կարգավիճակների տրամադրման գործընթացները: 2022թ. հունվարից գործարկվել է օտարերկրյա աշխատողների ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակը՝ workpermit.am-ը, որը հնարավորություն կտա հեշտացնել թվայնացման գործընթացը;
 2. վերանայվել են կացության կարգավիճակների տեսակները: Կացության կարգավիճակների հիմքերի կրկնությունից խուսափելու նպատակով նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել հատուկ կացության կարգավիճակ տալու հետ կապված դրույթները;
 3. սահմանվել է աշխատանքային վիզա հասկացությունը: Այն սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում կարճաժամկետ աշխատանքային գործունեություն իրականացնելու կամ օրենքով նախատեսված այլ հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար Հայաստանի Հանրապետության տարածքից դիմում ներկայացնելու հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ մինչև 120 օր գտնվելու իրավունքով մեկանգամյա կամ բազմակի մուտքի իրավունքով՝ առանց երկարաձգման հնարավորության: Աշխատանքային մուտքի վիզան տրվում է տվյալ օրացույցային տարվա ընթացքում միայն մեկ անգամ:
- Աշխատանքի թույլտվության փոխարեն ներմուծվել է քվոտավորման համակարգը, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր տարի իրականացվող միգրացիոն հոսքերի վերլուծության հիման վրա սահմանել դրանց ցանկալի քվոտաները տարբեր ձևաչափերով:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը 02.10.2025թ. ընդունվել են առաջին ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (հասանելի հեռուստա հղումով)

- Առաջարկվում է հնարավորություն տալ շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով պետական հանրակրթական դպրոցներին, բուհ-երին և նախնական մասնագիտական, միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել համախառն եկամտից:
- Նույն մոտեցումը առաջարկվում է կիրառել նաև Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին իրականացվող նվիրատվությունների մասով:

«Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հեռուստա հղումով)

- Նախագծով նախատեսվել են.
 - Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության «Օրենսդրական չափագիտության եզրույթների միջազգային բառարան» OIML V 1 և «Չափագիտության միջազգային բառարան. Հիմնական և ընդհանուր հայեցակարգեր ու հարակից եզրույթներ» OIML V 2-200 բառարաններով սահմանված հասկացություններին ներդաշնակեցված հասկացություններ,
 - չափաժրարված արտադրանքի նկատմամբ չափագիտական և դրանց շուկայահանման պահանջներ,
 - որպես չափիչ անոթ օգտագործվող շշերին ներկայացվող չափագիտական և դրանց շուկայահանման պահանջներ,
 - ոչ ավտոմատ գործողության կշռող սարքերին ներկայացվող պահանջները և դրանց շուկայահանման կարգը,
 - չափագիտության ազգային մարմնին աջակցող և ոլորտի փորձագետներից կազմված չափագիտության խորհրդի պահանջ,
 - ազգային և աշխատանքային չափանմուշներին ներկայացվող պահանջների հստակեցում,
 - չափագիտության լիազոր մարմնին և ազգային մարմնին վերապահված գործառույթների հստակեցում, և այլն:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հեռուստա հղումով)

- Նախագծի մշակումը պայմանավորված է «Մաքսային վճարների միասնական հաշիվ» էլեկտրոնային համակարգի (Միասնական հաշիվ) ներդրման անհրաժեշտությամբ, որը միտված է մաքսային վճարների գծով պարտավորությունների հաշվառման և մարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանը:
- Ներկայումս մաքսային վճարների գծով պարտավորությունների մարման նպատակով կատարվող փոխանցումներն իրականացվում են գանձապետարանում բացված առանձնացված հաշիվներին, և մեկ մաքսային հայտարարագրով ծագած պարտավորությունները մարելու համար կարող են իրականացվել մի քանի առանձին փոխանցումներ՝ համապատասխանաբար երկարաձգելով մաքսային ձևակերպումների համար ծախսվող ժամանակը և ավելացնելով փոխանցումներն առանձին իրականացնելու համար սահմանված միջոտորավճարների չափը: Միասնական հաշվի ներդրման նպատակներն են՝
 - նպաստել մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը,
 - մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառույթների դյուրացում, պարտավորությունների հաշվառման, ինչպես նաև դրանց մարման գործընթացների ավտոմատացում, պարզեցում,
 - չմարված պարտավորությունների մասով տույժերի հաշվարկի ավտոմատացում:
- Նախագծով նախատեսվում է՝
 - Միասնական հաշվի կիրառում համապատասխան դրամական միջոցների համալրման և այդ միջոցներով պարտավորությունների մարման նպատակով՝ անկախ մաքսային մարմնից և վճարի տեսակից, ինչն էականորեն կոյուրացնի դրամական միջոցների հոսքի հաշվառումը,
 - անհատական հաշվի հասանելիություն արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար,
 - տույժերի ինքնաշխատ հաշվարկ և հաշվառում՝ համաձայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և կարգի,
 - պարտավորությունների ինքնաշխատ մարման հնարավորություն՝ համաձայն վճարողի կողմից սահմանված կարգաբերումների,
 - գերավճարների տնօրինման, գումարների վերադարձի ընթացակարգերի դյուրացում:

«Կիբեռանվտանգության մասին» (հասանելի հետևյալ [հղումով](#)), «Հանրային տեղեկությունների մասին» (հասանելի հետևյալ [հղումով](#)), «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» (հասանելի հետևյալ [հղումով](#)) օրենքներ և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

- Օրենսդրական փաթեթի նախագիծը կարգավորում է կենսական ոլորտների (էներգետիկա, տրանսպորտ, կապ, ֆինանսական ծառայություններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, և այլն (ներառյալ թվային ենթակառուցվածքը)) տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիբեռանվտանգ միջավայրի ապահովումը: Օրենքը կկարգավորի կիբեռմիջադեպերի հայտնաբերման, ծանուցման և լուծման, կիբեռանվտանգության ոլորտի պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց լիազորությունների շրջանակի, օրենքի պահանջների պահպանման նկատմամբ մշտադիտարկման, պատասխանատվության, աուդիտի և կիբեռանվտանգության հետ կապված այլ հարաբերությունները:
- Կիբեռանվտանգության մասին օրենքի գործողությունը կտարածվի՝
 1. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք գործունեություն են ծավալում կենսական նշանակության ոլորտներից մեկում կամ մի քանիսում միաժամանակ և շահագործում են տեղեկատվական համակարգ կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք,
 2. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Այլ իրավաբանական անձինք կարող են կամավոր կերպով ստանձնել օրենքից բխող պարտավորությունները:
- «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը կարգավորում է հանրությանը և յուրաքանչյուր անձի թվային անվտանգ միջավայրում կամ բաց տեղեկությունների քաղաքականության իրականացման միջոցով արդյունավետ ու որակյալ ծառայություններ մատուցելու հետ կապված հարաբերությունները:
- «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագիծը կարգավորում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի՝ մասնավորապես Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի ստեղծման և գործունեության գործընթացը, դրա կարգավիճակը, անդամներին ներկայացվող պահանջները, մարմնում ծառայության հետ կապված հարաբերությունները և լիազորությունների շրջանակը:

«Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ [հղումով](#)) և արշակյան իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ [հղումով](#))

- Նախագծի ընդունմամբ նախատեսվում է հստակեցնել Կառավարության, շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների որոշ իրավասությունները:
- Նախատեսվում է նաև ամրագրել վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորմանը վերաբերող կարգավորումները: Կհստակեցվի նաև թափոնների հաշվառման, վտանգավոր թափոնների անձնագրավորման, վիճակագրական հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև թափոնների հեռացման վայրերում մոնիթորինգի և ուսումնասիրությունների իրականացման գործընթացները:
- Նախագծով առաջարկվում է լրացում կատարել նաև ՎԻՎ օրենսգրքի 43.2-րդ հոդվածում աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելու համար վարչական պատասխանատվության միջոց սահմանելով նաև աղբավայրը տնօրինողների նկատմամբ:

«Պրոբացիայի ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ [հղումով](#))

- Առաջարկվում է պետական այլ մարմիններում ծառայած և Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակված պրոբացիայի ծառայողներին հերթական կոչումը շնորհելիս հաշվի առնել նաև այդ մարմիններում տվյալ կոչումով (դասային աստիճանով) ծառայության ժամկետը:

«ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (հասանելի հետևյալ [հղումով](#)), «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ [հղումով](#))

- Օրենքի նախագծի նպատակն է ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանումը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը, ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխումը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը:

**Ստորև ներկայացված նախագծերը
22.10.2025թ. ընդունվել են առաջին
ընթերցմամբ:**

**Պետական տուրքի և պետական տուրքի
համար կիրառված տույժերի համաներման
մասին (հասանելի հետևյալ հղումով)**

- Նախատեսվում է, որ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիայի համար մինչև 2019 թվականի հունիսի 29-ը «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ մասի 15.6-րդ կետով (որով սահմանված են եղել ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի համար պետական տուրքի դրույքաչափերը՝ ամսական, եռամսյակային և տարեկան տուրքերի ձևով) նախատեսված պետական տուրքի գծով պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձինք ազատվում են պետական տուրքի և պետական տուրքի չվճարման համար հաշվարկված տույժերի վճարումից:

**«Գույքի նկատմամբ իրավունքների պետական
գրանցման մասին» օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին
(հասանելի հետևյալ հղումով)**

- Նախատեսվում է ամրագրել Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգում առկա անձնական գրասենյակ բաժնի միջոցով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պայմանագրերի հավաստման և դրանցից ծագող իրավունքների ինքնաշխատ եղանակով պետական գրանցմանն ուղղված կարգավորումներ:
- Նախագծով մանրամասն սահմանվում են «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգ մուտք գործած անձանց կողմից անձնական գրասենյակ բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հավաստված պայմանագրերին առաջադրվող պահանջները, ինչպես նաև դրանցից ծագող իրավունքների ինքնաշխատ եղանակով պետական գրանցման իրականացմանն ուղղված կարգավորումները:

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ
կատարելու մասին (հասանելի հետևյալ
հղումով), «Գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցման մասին» օրենքում
լրացում կատարելու մասին (հասանելի
հետևյալ հղումով)**

- Նախատեսվում է, որ բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության մասնակցությամբ՝ կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրերը կամ անշարժ գույքի առավաճառքի և հիփոթեքի խառը պայմանագրերը կարող են կնքվել առանց նոտարական վավերացման, եթե դրանք շարադրված են ՀՀ կառավարության հաստատած նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան և կնքվել են Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակում:

**«Մարդու վերարտադրողական առողջության և
վերարտադրողական իրավունքների մասին»
օրենքում փոփոխություններ կատարելու
մասին (հասանելի հետևյալ հղումով)**

- Նախագծով ներկայացված կարգավորումներով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 1-ի N ՍԴՈ-1775 որոշմամբ ճանաչված Սահմանադրությանը հակասող դրույթները կհամապատասխանեցվեն Սահմանադրությանը:
- Մասնավորապես՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի տարիքային սահմանափակում է նախատեսվել տղամարդկանց համար (55 տարեկան), կանանց համար (53 տարեկան), ինչպես նաև կանանց համար նշյալ իրավունքից օգտվելու տարիքային շեմը տարբերակվել է՝ ելնելով հղիությունը փաստացի կրելու հանգամանքից (53 տարեկան, եթե կինն է փաստացի կրում հղիությունը, եւ 55 տարեկան, եթե կինը հղիությունը փաստացի չի կրում):

Ստորև ներկայացված նախագծերը 22.10.2025թ. ընդունվել են երկրորդ, ընթերցմամբ և ամբողջությամբ:

«Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ներդնել համահաշտարարների ինստիտուտը, սահմանելով, որ կողմերի փոխադարձ համաձայնության առկայության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում հաշտարարությունը կարող է իրականացվել մի քանի հաշտարարներ ներգրավելու միջոցով: Նաև, նախատեսվում է, որ հաշտարարների վարձատրության չափը որոշվում է կողմերի և հաշտարարի միջև համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ մշտապես գործող հաշտարարական հաստատություններ գրավելու դեպքում՝ հաստատության կանոններով սահմանված կարգով:
- Սահմանվում է նաև, որ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն դիմել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ ՀՀ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է.
 1. ամրագրել որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունը և լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից որակի կառավարման համակարգ ներդնելու ընդհանուր պահանջից բացառությունները, որոնք արդեն սահմանված են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 02-ի N 1413-Ն որոշմամբ,
 2. սահմանել իրավական հետևանք լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունում որակի կառավարման համակարգ ներդրված չլինելու համար և սահմանել վերոնշյալ հիմքով լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում, խախտման պատճառով վերացումը հաստատող փաստը:

- Որպես իրավական հետևանք նախագծով առաջարկվում է բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի գործողության կասեցում: Լիցենզավորող մարմնին իրավունք կվերապահվի որակի կառավարման համակարգ ներդրված չլինելու դեպքում կասեցնել լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպության լաբորատոր-ախտորոշիչ տեսակով բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի գործողությունը:
- Նախագծով նախատեսվում է նաև Կառավարությանը վերապահել լիազորություն ընդունելու «Հայաստանի Հանրապետությունում լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների ռեեստր ձևավորելու և վերջինիս վարման կարգը հաստատելու մասին» որոշումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխություններով հիմնականում ավելացվում են պաշտպանի լիազորությունները: Մասնավորապես՝ պաշտպանն իրավասու կլինի ներկայացնելու իրավական դիրքորոշում (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ 2026 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված կամ կազմված բոլոր կադաստրային փաստաթղթերը պահվելու են միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործում:
- Սահմանվում է, որ պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է հանդիսանում իրավունքի պետական գրանցում հայցող գրանցման սուբյեկտի ներկայացրած դիմումը, որը ներկայացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ դիմումը կարող է ներկայացվել նաև սպասարկման գրասենյակ: Ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը տեսաներածվում և մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ: Դիմումի մուտքագրումից հետո դիմողին տրամադրվում է համակարգի կողմից ձևավորված արագ արձագանքման կոդ (QR) պարունակող դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածք:

«Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է սահմանել, որ Արդարադատության ակադեմիայի ռեկտորը ակադեմիայում դասավանդման գործընթացին ներգրավված անձանց հետ բացի քաղաքացիաիրավական պայմանագրերից կարող է կնքել է նաև աշխատանքային պայմանագրեր:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու և այլ հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսդիրն առաջարկում է փոփոխություններ իրականացնել, որի արդյունքում պետական մարմինները պետական գույքը կվարձակալեն պետությունից՝ անհատույց օգտագործման փոխարեն:
- Վարձակալության վրա հիմնված կառավարման հիմնական առավելություններն են ծախսերի փոխհատուցումը, տարածքի արդյունավետ օգտագործումը և հստակ հաշվետվողականությունը:

ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերից՝ արոտավայրերի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 25 տարի ժամկետով՝ սոցիալական կամ բարեգործական կամ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Այդ նպատակով գյուղատնտեսական նշանակության հողերից՝ արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրելու պարագայում վարձակալը պարտավոր է օգտագործել ըստ նպատակային և գործառնական նշանակության:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով ակնկալվում է ապահովել էլեկտրոնային համակարգի ամբողջական կիրառելիությունը՝ դատարանների կողմից անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու կամ վերացնելու վերաբերյալ կայացված ակտերը նույնպես էլեկտրոնային եղանակով անշարժ գույքի պետական ռեգիստրին ներկայացնելու միջոցով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխության նպատակն է միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերի կիրարկումը: Ի թիվս այլ փոփոխությունների՝
 1. այլընտրանքային խնամքի հրատապ կարիքի դեպքում նախատեսվում է ամրագրել փաստացի խնամակալ և հոգաբարձուի վերաբերյալ դրույթը,
 2. ամրագրվել է երեխայի լավագույն շահերի պարտադիր ապահովումը նրան վերաբերող հարցերում, ներառյալ՝ որդեգրման ու խնամատարության դեպքում,
 3. ամրագրվել են համայնքում մասնագիտացված սոցիալական աշխատողների հստակ գործառույթները երեխայի պաշտպանության ոլորտում:
 4. սահմանվել է նաև բռնության կամ դրա ռիսկի դեպքում պարտադիր ահազանգման պարտականությունը:

Ստորև ներկայացված նախագծերը 24.10.2025թ. ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է սահմանել հարկաբյուջետային հատուկ ռիսկերի նյութականացման և կառավարման, դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունն ապահովող դրույթներ: Նախատեսվում է.
 1. օրենքում սահմանել, որ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները ենթակա են նախնական գնահատման լիազորված մարմնի կողմից և հստակեցնել, որ դրանք նույնպես ենթակա են պարտադիր գրանցման պետական լիազորված մարմնում:
 2. միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը և Կառավարության բյուջետային ուղերձը շարադրող դրույթներում ավելացնել հարկաբյուջետային հատուկ ռիսկերին առնչվող տեղեկատվությունները:
 3. օրենքի պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրները սահմանող հոդվածներում ներառել «Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) մասին» օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող փոխհատուցումները և տույժերը:

«Պետական պարտքի մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերով առաջարկվում է ամրագրել նոր կարգավորումներ, մասնավորապես՝
 1. վերանայել «պետական պարտք» հասկացությունը, սահմանել «հանրային հատվածի պարտք» հասկացությունը,
 2. ամրագրել պետական արտարժույթային պարտատոմսերի թողարկման հստակ լիազորություն՝ այն վերապահելով լիազոր մարմնին.
 3. նախատեսել փոխառությունների տարեկան ծրագրի մշակման և հրապարակման օրենսդրական պահանջ.
 4. սահմանել լիազոր մարմնի իրավասությունը՝ վարկային միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո կատարելու պայմանագրով նախատեսված փոփոխություններ.
 5. սահմանել, որ եթե առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում կառավարության պարտքը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցել է նախորդ տարվա ՀՆԱ-ի 60%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն և բյուջետային երաշխիքներից բխող որևէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում.
 6. սահմանել, որ եթե նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի, պայմանագրային պայմանական պարտավորությունների և բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը գերազանցում է նախորդ տարվա ՀՆԱ-ի 70%-ը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որևէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում և այլն:

Ստորև ներկայացված նախագծերը 24.10.2025թ. ընդունվել են երկրորդ, ընթերցմամբ և ամբողջությամբ:

«Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկումը իրականացնում է կանոնարկման հանձնաժողովը: Կանոնարկման կարգը, կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու է ՀՀ Կառավարությունը:

«Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Հիմք ընդունելով էլեկտրամոբիլների լիցքավորման ոլորտում առաջացող բարդությունները՝ սույն նախագծով նախատեսվում է.
 1. ամրագրել, որ յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ սպառողի կողմից կարող է մատուցվել էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայություն, որը չի հանդիսանում էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ և «Էներգետիկայի մասին» օրենքի իմաստով կարգավորման ենթակա չէ, ինչպես նաև հնարավորություն ստեղծել սպառողի համար՝ իրեն մատակարարված էլեկտրաէներգիան սպառել նաև սպառողի սպառման համակարգի տեղակայման տարածքից դուրս գտնվող և իրեն պատկանող ավտոկայանատեղիում ու որպես ինքնուրույն գույքային միավոր գրանցված բնակելի նշանակության այլ տարածքում՝ գործող պահանջներին համապատասխան ինքնուրույն իրականացնելով այդ համակարգերի միմյանց միացումը:
 2. 150 կՎտ-ը գերազանցող հզորությամբ ինքնավար էներգաարտադրողների համար հնարավորություն ստեղծել նույն կարգավիճակն ունեցող մյուս անձանց հետ հավասար պայմաններով՝ մասնակցելու էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկային՝ այդ կերպ նաև խթանելով էլեկտրաէներգետիկական շուկայում մրցակցությունը:

«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով՝
 1. հստակեցվում է, որ պատվիրատուն չի կարող փոխել կնքված պայմանագրով նախատեսված գնման առարկան, իսկ բնութագրերին (տեխնիկական բնութագիր, մատակարարման և վճարման պայմաններ) ներկայացվող պահանջների փոփոխման դեպքերը և կարգը կսահմանի Կառավարությունը:
 2. նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը պայմանագրի և որակավորման ապահովումները պետք է ներկայացնի բանկային երաշխիքի ձևով, ապա դրանց ներկայացման համար նախատեսվող ժամկետը պատվիրատուն ի սկզբանե նախատեսում է հրավերով, որը չի կարող պակաս լինել 10 օրից:
 3. նախատեսվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և բխեն կարիքից, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը և ներառեն ոչ գնային պայմանների ամբողջական նկարագրությունը:

«Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխությունները վերաբերում են հանրակրթական դպրոցների ենթակայության փոփոխությանը, որի արդյունքում անցում կկատարվի կենտրոնացված մոդելի՝ Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ենթակայությամբ:
- ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատությունների կենտրոնացված կառավարումը մեկ լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության կողմից նախատեսում է գործառույթների միասնական և համալիր փոխազդեցություն պետական, տարածքային և տեղական մակարդակներում՝ ուղղված որակյալ կրթություն ապահովելուն:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխության նպատակն է օրենսդրական կարգավորումները համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1780 որոշմանը:
- Նախատեսվում է, որ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են այսուհետ Բարձագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (խորհրդակցական սենյակում՝ բաց քվերակությամբ):

E-DRAFT Հարթակում հանրային քննարկման դրված նախագծեր

«ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 31-ի N 1723-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Թվայնացման ռազմավարության շրջանակում Կադաստրի կոմիտեն ձեռնարկում է կարևոր քայլ՝ «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» և «Գնահատման գործունեության մասին» օրենքների պահանջներին համապատասխան որակավորման վկայականների տրամադրման ամբողջական թվայնացման ուղղությամբ:
- Գործող կարգով վկայականները տրամադրվում էին թղթային ձևաչափով: Փոփոխություններով նախատեսվում է անցում կատարել բացառապես էլեկտրոնային տրամադրման՝ ապահովելով վարչարարության արդյունավետության և թափանցիկության բարձր մակարդակ:
- Ըստ նոր կարգավորման՝
 1. վկայականը տրվելու է բացառապես էլեկտրոնային ձևաչափով,
 2. այն կուղարկվի դիմողի նշած էլեկտրոնային փոստին՝ որակավորման անցկացումից հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում,
 3. վկայականի իսկությունն ու վավերականությունը երաշխավորվելու են QR կոդի և հսկիչ համարի միջոցով, որոնք թույլ կտան իրականացնել առցանց ստուգում Անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքում:
- Փոփոխությունները կբացառեն փաստաթղթային կրկնօրինակների շրջանառության անհրաժեշտությունը, կնվազեցնեն սխալների ռիսկերը և կնպաստեն «մեկ պատուհանի» սկզբունքով արագ ու պարզ վարչարարությանը:

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկում է որոշ գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքը սահմանափակել կոնկրետ սուբյեկտի՝ վարչական մարմինների համար: Մասնավորապես, եթե հանրային իրավական դրամական պահանջով գործի պահանջը մինչև 200,000 դրամ է (շեմը՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկ), վարչական մարմինը կկարողանա վերաքննիչ բողոք բերել միայն այն դեպքում, երբ հիմնավորված կերպով ցույց տրվի դատական սխալ, որն ուրվագծորեն խաթարում է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխություններով նախատեսվում է կառուցապատողներին թույլատրել իրենց հատուկ հաշիվների միջոցներով ձեռք բերել պետական դրամային պարտատոմսեր: Գործող սահմանափակումների պայմաններում բանկային տոկոսադրույքներից ստացվող եկամուտը հաճախ ցածր է շուկայական հնարավորություններից, ինչի հետևանքով հատուկ հաշվի միջոցների արդյունավետ օգտագործումը սահմանափակվում է: Առաջարկվող կարգավորումը թույլ կտա բարձրացնել այդ միջոցների եկամտաբերությունը՝ միաժամանակ չխաթարելով հատուկ հաշվի՝ որպես ռիսկերի կառավարման գործիքի նշանակությունը:
- Պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամուտը կմուտքագրվի կառուցապատողի բանկային հաշիվ՝ առանց ծախսման սահմանափակման, իսկ պարտատոմսերի մարումից կամ իրացումից ստացվող գումարները բացառապես կվերադարձվեն կառուցապատողի հատուկ հաշվին: Միևնույն ժամանակ, հատուկ հաշվի նկատմամբ գործող սահմանափակումները (գրավադրում, արգելադրում, բռնագանձում և այլն) նույնությամբ տարածվելու են նաև պարտատոմսերի վրա:

«Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերի թվային համակարգ մուտքագրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով նախատեսվում է սահմանել՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընդունված և գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի թվային համակարգ մուտքագրելու կարգը:
- Միաժամանակ գործող աշխատանքային պայմանագրերը (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը) թվային համակարգ մուտքագրելու և թվային ստորագրությամբ ստորագրելու համար նախագծով նախատեսվում է 12-ամսյա ժամկետ:

«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագիծը նախատեսում է ներդնել աշխատանքային իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմ՝ տեսչական մարմնի կազմում գործող մշտական Աշխատանքային վեճերի հանձնաժողովի ձևաչափով: Կողմերը կարող են վեճի լուծման համար դիմել կամ դատարան, կամ անվճար գործող Հանձնաժողովին, և Հանձնաժողովի դիմելու պահին դատարան դիմելու համար սահմանված ժամկետը կասեցվում է, և հաշվարկը վերսկսվում է նրա որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:
- Հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից՝ նախագահ, ինչպես նաև արհմիությունների և գործատուների հանրապետական միությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի անդամների վարձատրության և ճանապարհածախսի վճարման կարգը սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը:

«Կատարողական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- Էլեկտրոնային արդարադատության զարգացման լույսի ներքո՝ նախագծով առաջարկվում է դատարանների հետ կապուղիների ու էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման դիմում ներկայացնելու համակարգի ներդրման և այդ մասով «Կատարողական վարույթի մասին» օրենքի կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետը պայմանավորել համապատասխան կապուղիների համակցման հետ:

«ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է սահմանել, որ փորձաքննություն իրականացնող հավատարմագրված կազմակերպությունները փորձագիտական եզրակացությունները ՀՀ ՊԵԿ-ին կներկայացնեն միայն ՊԵԿ-ի համապատասխան պահանջի առկայության դեպքում, մինչդեռ փորձաքննության օբյեկտի վերաբերյալ անհրաժեշտ այլ տվյալների (ապրանքի նկարագիր, հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ, եզրակացության ամսաթիվ, և այլն) ներկայացումը կշարունակի մնալ պարտադիր:

«Հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի՝ որպես ապրանքների հայտարարագիր կիրառման համար ապրանքների կատեգորիաները և տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի՝ որպես ապրանքների հայտարարագիր կիրառման կարգը սահմանելու մասին» (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է ընդլայնել Մաքսային Միության Հանձնաժողովի N 263 (20.05.2010թ.) որոշմամբ սահմանված շրջանակը՝ հնարավորություն տալով, որ հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող, բայց այդ որոշման մեջ չներառված մի շարք ապրանքների դեպքում ուղեկցող տրանսպորտային/առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը կիրառվեն որպես ապրանքների հայտարարագիր:
- Սահմանվում է, որ հաշվառման ու հսկողության նպատակով մաքսային մարմինը կարող է ձևավորել հայտարարագրի էլեկտրոնային տարբերակ: ՀՀ ՊԵԿ-ին վերապահվում է նման գործառնությունների գործարկման ժամկետները սահմանելու իրավասություն:

«Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Գործատուների միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի և հարակից նախագծերի փաթեթ (հասանելի հետևյալ հղումով)

- «Արհեստակցական միությունների մասին» օրենքի փոփոխություններով առաջարկվում է արհմիությունների համակարգը համապատասխանեցնել ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններին. արհմիության անդամակցության իրավունքը այլևս չի կապվի միայն աշխատանքային պայմանագիր ունենալու հետ, իսկ պետական գրանցման ընթացակարգերը կպարզեցվեն և կարագացվեն՝ կրճատելով ժամկետներն ու վարչական/տուրքային բեռը:
- Միաժամանակ, արհմիություններին տրված դատարան դիմելու իրավունքը կստանա լիարժեք դատավարական հիմք՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսվող լրացումներով, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն վիճարկել գործատուի կողմից ընդունված, աշխատողների սոցիալ-տնտեսական վիճակը վատթարացնող ակտերը: